ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

   Արմեն Հայրապետյան

   Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Ավստրիա (ք. Վիեննա), 2023 թվականի հոկտեմբերի 1-5-ը

3. **Հրավիրող կողմը.**

   Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն (CARD) հիմնադրամ

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   Բարձրաստիճան պաշտոնյաների իրազեկվածությունը բարձրացնելու և գյուղատնտեսական քաղաքականության իրականացման պահանջներին և ինստիտուցիոնալ կառուցվածքին ծանոթանալու նպատակով

5. **Քննարկված թեմաները.**

   Ավստրիայի փորձը գյուղատնտեսական ծրագրերի պլանավորման, իրականացման և վերահսկողության վերաբերյալ: Մասնավորապես կենտրոնանալով սպանդանոցային համակարգի մանրամասների վրա:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

   Գործուղման ընթացքում Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Հայրապետյանը Հայաստանի Հանրապետության պատվիրակության հետ միասին այցելել են Գյուղատնտեսության և անտառային տնտեսության և տարածաշրջանային ու ջրային ռեսուրսների կառավարման դաշնային նախարարություն, որտեղ ծանոթացել են նախարարության կառուցվածքին, դերին ու պատասխանատվության շրջանակներին, ինչպես նաև գյուղատնտեսական քաղաքականության ֆինանսական պլանավորման և ֆինանսավորման մշակման գործընթացին:

   Պատվիրակությունը հաջորդիվ այցելել է Ագրարմարկտ Ավստրիա (AMA-ԱՄԱ - Ավստրիայի գյուղատնտեսության և գյուղի զարգացման վճարային գործակալություն), որտեղ ևս ներկայացվել են գործակալության կառուցվածքն ու դերը, վերահսկողական

գործառույթները, համագործակցությունն այլ կապակցված հաստատությունների հետ, կենդանիների համարակալման և հաշվառման համակարգին վերաբերող օրենքներն ու կանոնակարգերը, փոքր սպանդանոցների դերը Ավստրիայի գյուղական համայնքներում և այլն:

Հայկական պատվիրակությունն ունեցել է նաև տարածաշրջանային այցեր, մասնավորապես՝ Ավստրայի ստորին շրջանների տարածաշրջանային անասնաբուժական պալատ և Գյուղատնտեսական դպրոց:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Ավստրիայի փորձը փաստում է, որ այնտեղ նույնպես արգելված է եղել մսի ոչ սպանդանոցային վաճառքը, սակայն կառավարությունը ներդրման ժամանակահատվածից սկսած 10 տարի շարունակ վճարել է 84 եվրո յուրաքանչյուր սպանդանոցային մորթի գլխի համար: Միաժամանակ, 2022 թվականին հաշվառված է եղել 2,677 սպանդանոց. միայն 17-ն են բավականաչափ մեծ՝ ԵՄ պահանջներին համապատասխան և վերջիններիս կողմից իրականացվել են խոշոր եղջերավոր կենդանիների ողջ անասնագլխաքանակի 75%-ի մորթը, իսկ 2660-ը՝ եղել են փոքր: Հաշվի առնելով, նշված փորձը առաջարկվում է օրենդրությամբ ստեղծել հնարավորություն փոքր սպանդանոցների կառուցման համար, միաժամանակ փորձել ներդնել սպանդանոցային մորթի յուրաքանչյուր կենդանու գլխի համար սեփականատիրոջը խթանելու, աջակցելու, այլ ծրագրերից օգտվելու առավելություն տալու կամ այլ համանման հնարավորություն:

Oct 10 2023 6:44 PM

9. **Ստորագրությունը, ամսաթիվը.** 10 հոկտեմբերի 2023.